




ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ
ԳԻՏԱԿԱԿՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ
ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՄ)




ԵՐԵՎԱՆԻ
ԳԻՏԱԿԱԿՆ
ՀԱՄԱԼՍԱՐԿԱՆ



«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ
ՊՂՆՁԱՄՈՒԼԻԲԳԵՆԱՅԻՆ
ԿՈՄԻՏԵԱՑ» ՓԲԸ



ԳԻՏԱԿԱԿԱՆ ԱՐՑԱԽ



SCIENTIFIC
ARTSAKH

НАУЧНЫЙ
АРЦАХ

Հիմնադիր – Founder – Учредитель:
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ԵՊՀ)
YEREVAN STATE UNIVERSITY (YSU)
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ (ЕГУ)
www.y-su.am

Հրատարակիչ – Publisher - Издатель:
ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԻՎՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՄ)
UNION OF YOUNG SCIENTISTS AND SPECIALISTS OF ARTSAKH (UYSSA)
ОБЪЕДИНЕНИЕ МОЛОДЫХ УЧЁНЫХ И СПЕЦИАЛИСТОВ АРЦАХА (ОМУСА)
www.aegmm.org

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ
SCIENTIFIC ARTSAKH
НАУЧНЫЙ АРЦАХ

№ 1(2), 2019

«Գիտական Արցախ» պարբերականն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման կոմիտեի (ՀՀ ԲՈԿ) սահմանած դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

The «Scientific Artsakh» journal is included in the list of scientific periodicals acceptable for publication of the main results and provisions of doctoral and candidate theses established by the Higher Attestation Committee of the Republic of Armenia (HAC RA).

Журнал «Научный Арцах» включен в список научных периодических изданий, приемлемых для публикации основных результатов и положений докторских и кандидатских диссертаций, установленных Высшим аттестационным комитетом Республики Армения (ВАК РА).

ԱԵԳՄՄ – UYSSA – ОМУСА
ԵՐԵՎԱՆ – YEREVAN – ЕРЕВАН
2019

Հրատարակության է երաշխավորվել Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ

Рекомендовано к публикации решением ученого совета Ереванского государственного университета

Recommended for Publication by the Yerevan State University Academic Council Decision

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Լախագահ՝ Արամ ՄԻՄՈՆՅԱՆ ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գլխավոր խմբագիր՝ Ավետիք ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Թեհմինա ՍԱՐՈՒԹՅԱՆ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Անդամներ՝

Արծրուն ԱՎԱԳՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Հրանտ ԱՎԱՆԵՍՅԱՆ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Դավիթ ԲԱԲԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ
Վահրամ ԲԱԼԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Խաչիկ ԳԱԼՍՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, դոցենտ
Զուլիետա ԳՅՈՒԼԱՍԻՐՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Վլադիսլավ ԳՐՈՒԶԴԵՎ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Կոստրոմա, ՌԴ)
Գևորգ ԴԱՆԻԵԼՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Արման ԵՂԻՎԱԶՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ
Մարել ԺԵՅՄՈ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Օլշտին, Լեհաստան)
Վալենտինա ԼԱՊԵՎԱ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Մոսկվա, ՌԴ)
Օտտո ԼՈՒԻՏԵՐՅԱՆԴՏ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Չամբուրգ, Գերմանիա)
Նազիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Սուշեղ ՀՈՎՍԵՓՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Գագիկ ԴԱԶԻՆՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Վշոտ ՍԱՐԿՈՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Էդիկ ՄԻՆԱՍՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Կարին ԼԵՐՍԻՍՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Հայկ ՍԱՐԳՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Յուրի ՍՈՒՎԱՐՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Մաքսիմ ՎԱՍԿՈՎ, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Դոնի Ռոստով, ՌԴ)
Գարիկ ԲԵՌՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Տիգրան ԶՈՂԱՐՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գիտական Արցախ, № 1(2), 2019, Երևան, ԱԵԳՄՄ հրատ., 2019, 480 էջ:
Scientific Artsakh, № 1(2), 2019, Yerevan, UYSSA publ., 2019, 480 pages.
Научный Арцах, № 1(2), 2019, Ереван, Изд. ОМУСА, 2019, 480 страниц.

«Գիտական Արցախ» պարբերականի 2019թ. 1-ին համարում տեղ են գտել հասարակական գիտությունների արդի հիմնախնդիրների վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունը, Արցախի Հանրապետությունը, Բելառուսի Հանրապետությունը, Իրանի Իսլամական Հանրապետությունը, Լեհաստանը, Շվեյցարիան և Ռուսաստանի Դաշնությունը ներկայացնող 50 անվանի ու երիտասարդ գիտնականների աշխատանքները:

In the first issue of the «Scientific Artsakh» journal in 2019 the works on topical issues of social sciences by 50 well-known and young scientists representing Republic of Armenia, Republic of Artsakh, Republic of Belarus, the Islamic Republic of Iran, Poland, Switzerland and the Russian Federation are published.

В первом номере за 2019-ый год журнала «Научный Арцах» опубликованы работы по актуальным проблемам общественных наук, авторами которых являются 50 известные и молодые ученые, представляющие Республику Армения, Республику Арцах, Республику Беларусь, Исламскую Республику Иран, Польшу, Швейцарию и Российскую Федерацию.

EDITORIAL COUNCIL

Chairman: Aram SIMONYAN, Director of Institute for Armenian Studies of YSU, NAS RA Associate Member, Doctor of History, Professor

Editor-in-Chief: Avetik HARUTYUNYAN, Ph.D in Law, Associate Professor

Deputy Editor-in-Chief: Tehmina MARUTYAN, Ph.D in Philology, Associate Professor

Members:

Artsrun AVAGYAN, Doctor of Philology, Professor
Hrant AVANESYAN, Doctor of Psychology, Professor
David BABAYAN, Doctor of History, Associate Professor
Vahram BALAYAN, Doctor of History, Professor
Gevorg DANIELYAN, Doctor of Law, Professor
Khachik GALSTYAN, Doctor of Political Sciences, Associate Professor
Gagik GHAZINYAN, Academician of NAS RA, Doctor of Law, Professor
Vladislav GRUZDEV, Doctor of Law, Professor (Kostroma, Russia)
Julietta GYULAMIRYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor
Nazik HARUTYUNYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor
Moushegh HOVSEPYAN, Doctor of Philology, Professor
Garik KERYAN, Doctor of Political Sciences, Professor
Tigran KOCHARYAN, Doctor of Political Sciences, Professor
Valentina LAPAEVA, Doctor of Law, Professor (Moscow, Russia)
Otto LUCHTERHANDT, Doctor of Law, Professor (Hamburg, Germany)
Ashot MARKOSYAN, Doctor of Economic Sciences, Professor
Edik MINASYAN, Doctor of History, Professor
Karen NERSISYAN, Ph.D in Economic Sciences, Associate Professor
Hayk SARGSYAN, Doctor of Economic Sciences, Professor
Yuri SUVARYAN, Academician of NAS RA, Doctor of Economic Sciences, Professor
Maksim VASKOV, Doctor of Sociology, Professor (Rostov-on-Don, Russia)
Arman YEGHIAZARYAN, Doctor of History, Associate Professor
Marek ZEJMO, Doctor of Political Sciences, Professor (Olsztyn, Poland)

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Председатель: Арам СИМОНЯН, директор Института арменоведческих исследований ЕГУ, член-корреспондент НАН Республики Армения, доктор исторических наук, профессор

Главный редактор: Аветик АРУТЮНЯН, кандидат юридических наук, доцент

Заместитель главного редактора: Теймина МАРУТЯН, кандидат филологических наук, доцент

Члены:

Арцрун АВАГЯН, доктор филологических наук, профессор
Грант АВАНЕСЯН, доктор психологических наук, профессор
Назик АРУТЮНЯН, доктор педагогических наук, профессор
Давид БАБАЯН, доктор исторических наук, доцент
Ваграм БАЛАЯН, доктор исторических наук, профессор
Максим ВАСЬКОВ, доктор социологических наук, профессор (Ростов-на-Дону, Россия)
Хачик ГАЛСТЯН, доктор политических наук, доцент
Владислав ГРУЗДЕВ, доктор юридических наук, профессор (Кострома, Россия)
Джюльетта ГЮЛАМИРЯН, доктор педагогических наук, профессор
Геворг ДАНИЕЛЯН, доктор юридических наук, профессор
Арман ЕГИАЗАРЯН, доктор исторических наук, доцент
Мареk ЖЕЙМО, доктор политических наук, профессор (Ольштын, Польша)
Гарик КАЗИНЯН, академик НАН РА, доктор юридических наук, профессор
Гарик КЕРЯН, доктор политических наук, профессор
Тигран КОЧАРЯН, доктор политических наук, профессор
Валентина ЛАПАЕВА, доктор юридических наук, профессор (Москва, Россия)
Отто ЛЮХТЕРХАНДТ, доктор юридических наук, профессор (Гамбург, Германия)
Ашот МАРКОСЯН, доктор экономических наук, профессор
Эдик МИНАСЯН, доктор исторических наук, профессор
Карен НЕРСИСЯН, кандидат экономических наук, доцент
Мушег ОВСЕПЯН, доктор филологических наук, профессор
Гайк САРГСЯН, доктор экономических наук, профессор
Юрий СУВАРЯН, академик НАН РА, доктор экономических наук, профессор

Աշոտ Մարկոսյան, Մարինե Ղահրամանյան. Բիզնես գործընթացների կառավարման առանձնահատկությունները Հայաստանում..... 136
Ashot Markosyan, Marine Ghahramanyan. The Specifics and Peculiarities of Business Process Management in Armenia

Ашот Маркосян, Марине Каграманян. Специфика и особенности управления бизнес-процессами в Армении

Աշոտ Մարկոսյան, Էլյանորա Մաթևոսյան. Պետական պարտքի «ճգնաժամը» և Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքի արդյունավետությունը..... 148

Ashot Markosyan, Eleonora Matevosyan. «Crisis» of the State Debt and Efficiency of the External State Debt of the Republic of Armenia

Ашот Маркосян, Элеонора Матевосян. «Кризис» государственного долга и эффективность внешнего государственного долга Республики Армения

Միքայել Սողոմոնյան. Բնական մենաշնորհների պետական կարգավորման մեթոդների և կառուցակարգերի կատարելագործման ուղղությունները..... 170
Mikayel Soghomonyan. The Ways to Improve the Methods and Mechanisms of State Regulation of Natural Monopolies

Микаэл Согомонян. Пути совершенствования методов и механизмов государственного регулирования естественных монополий

Արամ Վերդյան. Հնդկացորենի արտադրության և վերամշակման խնդիրները Արցախի Հանրապետության պարենային անվտանգության ապահովման համատեքստում..... 179

Aram Verdyan. The Problem of Production and Processing of Buckwheat in the Context of Artsakh Republic's Food Security Providing

Арам Вердян. Проблемы производства и переработки гречихи в контексте обеспечения пищевой безопасности Республики Арцах

Լևոն Զոչարյան. ՀՀ-ին բնորոշ գյուղատնտեսական ռիսկերը. ապահովագրությունը որպես այդ ռիսկերի զսպման մեխանիզմ..... 194

Levon Kocharyan. Specific Agricultural Risks in Armenia. Insurance, as a Risk Mitigation Mechanism

Левон Кочарян. Характерные для Республики Армения сельскохозяйственные риски: страхование как механизм снижения этих рисков

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, JURISPRUDENCE, ЮРИСПРУДЕНЦИЯ

Ալֆրեդ դե Չայաս. Ինքնորոշում. Արցախի անկախության իրավունքը հաստատող ժամանակակից միջազգային կարգի հիմնարար սկզբունքը..... 199

Alfred De Zayas. Self-Determination: A Foundational Principle of Today's International Order That Confirms Artsakh's Right to Independence

Альфред де Зайас. Самоопределение: основополагающий принцип современного международного порядка, подтверждающий право Арцаха на независимость

ԲՆԱԿԱՆ ՄԵՆԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԵՎ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

ՀՏԴ 332:339.1(479.25)

ՄԻՔԱՅԵԼ ՍՈՂՈՍՈՆՅԱՆ

*ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող
հանձնաժողովի նախագահի տեղակալ,
Հայաստանի ազգային ազրարային համալսարանի հայցորդ,
բ.Երևան, Հայաստանի Հանրապետություն
mikavelsoghomonyan@mail.ru*

Հոդվածի հիմնական նպատակն է վերլուծել բնական մենաշնորհների պետական կարգավորման կառուցակարգերը և գնահատել ՀՀ-ում բնական մենաշնորհի սուբյեկտների շահերի հավասարակշռությունը ծառայությունների մատուցման ու սպառման կազմակերպման բնագավառում: Խնդիր է դրվել հետապնդել պետության մասնակցության չափը բնական մենաշնորհի կարգավորման գործում, ինչպես նաև առանձնացնել բնական մենաշնորհի պետական կարգավորման հիմնական մեթոդները, որոնք ընդունելի կլինեն Հայաստանում բնական մենաշնորհի կառավարման բնագավառում:

Լերկայացվում են կարգավորման գործընթացում կիրառվող մեթոդների արդյունավետության ապահովման կառուցակարգերը՝ շեշտը դնելով կարգավորման գնային, ներդրումային ու սոցիալական քաղաքականություններին: Հեղինակն առանձնակի տեղ է հատկացնում ոլորտը կարգավորող հիմնական սկզբունքներին, որոնցով առաջնորդվում է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող մարմինը:

Շուկայական տնտեսավարման պայմաններում ՀՀ-ում խնդիրներ են առաջադրվում ոչ միայն բնական մենաշնորհների գործունեության ապահովման հարցում, այլ նաև ազգային տնտեսության համակարգում դրանց կարգավորիչ գործառույթների ամրապնդման ու ընդլայնման գործում: Կարգավորման մակրոտնտեսական ու ռեսուրսային մեթոդների համատեղ օգտագործումը լրացուցիչ հնարավորություն կընձեռնի իրականացնելու ներդրումային հոսքերի արդյունավետ կառավարում, կենտրոնացնելու դրանք տնտեսության գերակա ճյուղերում, ինչպես նաև այդ գործընթացների պետական կարգավորումը հասցնելու որակական նոր մակարդակի:

Բանալի բառեր՝ բնական մենաշնորհ, պետական կարգավորում, կառավարում, մեթոդ, կառուցակարգ, գնային քաղաքականություն, ենթակառուցվածք:

Պետության տնտեսական կարևոր գործառույթներից է արդարացի մրցակցության ու բնական մենաշնորհների հավասարակշռված համակարգումը, ուստի էլձևելով համապետական ու հանրային շահերի զարգացումից՝ պետք է ապահովվեն այնպիսի պայմաններ, որոնք առավել ռացիոնալ ու արդյունավետ օգտագործեն տնտեսական ռեսուրսները: Ռեսուրսների հոսքերի կառավարումն իրականացվում է բնական մենաշնորհների՝ որպես կարգավորման համակարգի

* Հոդվածը ներկայացվել է 08.02.2019թ., գրախոսվել՝ 30.03.2019թ., տպագրության ընդունվել՝ 17.06.2019թ.:

կենտրոնական սուբյեկտի միջոցով, իսկ բնական մենաշնորհների կառավարման միջոցով ստեղծվում է նշված նպատակներին հասնելու՝ երկրի տնտեսության կարգավորման գործիքակազմ: Կարգավորման ռազմավարության սահմանումը երկրի բարձրագույն ղեկավար մարմինների մենաշնորհն է, որի հիման վրա էլ պետական համապատասխան կառույցները որոշում են նպատակային ցուցանիշների համակարգը, ինչն էլ տնտեսության զարգացման ինդիկատորն է ու կարգավորման կառուցակարգի նպատակային գործառույթը:

Նպատակային ցուցանիշների համակարգը հենվում է տնտեսության կոնկրետ մոդելի վրա, որի կենտրոնական օղակը արտադրական ոլորտի բաժանումն է երկու հիմնական հատվածի՝ ա) բնական մենաշնորհի հատված, բ) տնտեսության մրցակցային հատված:

Այդ հատվածների փոխգործունեությունը կատարվում է աշխատանքային, ներդրումային ու ֆինանսական ռեսուրսների հոսքերի միջոցով, որոնց կառավարումն իրականացվում է բնական մենաշնորհի հատվածի կողմից: Այդ հատվածում ընդգրկվում են կարևոր, բնական մենաշնորհները, որոնք հանդիսանում են տնտեսության ենթակառուցվածքային ճյուղերի առանցքը: Տնտեսության մրցակցային հատվածի մեջ մտնում են ծառայություններ մատուցող ձեռնարկությունները, որոնք գործում են շուկայական միջավայրի պայմաններում: Մրցակցային հատվածն իր հերթին ստորաբաժանվում է տնտեսության ֆոնդաստեղծող ու սպառողական բարիքներ արտադրող հատվածների:

Տնտեսության կառավարման համակարգում բնական մենաշնորհները երկակի դեր են խաղում. նախ՝ հանդիսանում են պետական ակտիվ կարգավորման օբյեկտ, որում բնական մենաշնորհների հանդեպ կիրառում են պետական վերահսկողություն, ապա՝ բնական մենաշնորհները հանդես են գալիս որպես պետական քաղաքականության իրականացման միջոց տնտեսության մյուս ճյուղերի ու մակրոտնտեսական ընդհանուր կարգավորման պարագայում: Ընդ որում, բնական մենաշնորհն օգտագործում է իր բացառիկ դիրքը և, գտնվելով ամբողջ տնտեսական համակարգի ստորաբաժանումների շահերի բարձրագույն կետում, էական ազդեցություն է թողնում տնտեսության մյուս ճյուղերի վրա: Փաստորեն, պետությունն անուղղակիորեն բնական մենաշնորհի միջոցով իր պայմաններն է թելադրում մրցակցային հատվածի ձեռնարկություններին:

Բնական մենաշնորհի կառավարման հիմքի վրա տնտեսության կարգավորումը հնարավորություն է տալիս ստեղծելու տնտեսության տարբեր ստորաբաժանումների տարբերակված ներգործություններ, ընդհուպ մինչև «հասցեագրված ներգործություն», քանի որ տնտեսական համակարգի մեջ մտնող ձեռնարկությունները անհատականություններ են բնական մենաշնորհի ծառայությունների ու արտադրանքի սպառման հարցում: Նման իրավիճակը հնարավորություն է տալիս հասնելու տնտեսության «նուրբ կառավարման» կիրառմանը:

Նման համակարգի կիրառությունը բոլորովին չի ժխտում կառավարման առկա մեթոդների օգտագործումը: Չնայած բնական մենաշնորհների կառավարումը կարող է օգտագործել տնտեսության մակրոտնտեսական մեթոդներում օգտագործվող կարգավորող ազդանշանները, որոնք վերաբերում են տնտեսության խոշոր ստորաբաժանումներին, այդուհանդերձ դրանց ներգործության ոլորտներն ավելի մեծ են և վերաբերում են շուկայի բոլոր սուբյեկտներին:

Բնական մենաշնորհի հատվածի կարգավորման կատարելագործման նպատակով առաջարկվում է օգտագործել նոր մեթոդոլոգիական մոտեցում՝ սահմանելով գների առաստաղ: Դրա էությունն այն է, որ տնտեսվարող սուբյեկտների հանդեպ հերթականորեն սահմանվեն ներգործության տարբեր ուղղություններ այն պայմանով, որ կառուցվի հակադարձ կապի համակարգ կարգավորողի ու ճյուղի միջև, ինչը հնարավորություն կտա կարգավորողին ստանալու ստույգ տեղեկություն

կարգավորվող վիճակի վերաբերյալ և գործնականորեն գնահատելու նախաձեռնված միջոցառումների արդյունավետությունը²⁵⁰:

Մեր կարծիքով, բնական մենաշնորհի երկարաժամկետ զարգացման հայեցակարգը պետք է լինի կենտրոնացված, համալիր կերպով հաշվի առնվեն բոլոր (այդ թվում՝ պետական) ձեռնարկությունների ու կից ճյուղերի ներդրողների պլաններն ու ծրագրերը: Օրինակ, էլեկտրաէներգետիկայի ճյուղում էլեկտրակայանի կառուցումը և էլեկտրահաղորդակցության գծերի մոնտաժումն էներգասակավ տարածաշրջաններում որոշ դեպքերում հանդիսանում են համարժեքային լուծում, և նպատակահարմար է ընտրել դրանցից առավել քիչ ծախսատար (հաճախ դա էլեկտրագծերի մոնտաժումն է) տարբերակը: Սակայն, եթե գոյություն ունի տվյալ տարածաշրջանում էներգատար արտադրություն զարգացնելու ծրագիր, ապա այդ դեպքում առաջնահերթությունը պետք է տրվի պոտենցիալ էլեկտրակայանի շինարարությանը:

Հարկ է նշել, որ ներդրումների համար անհրաժեշտ ֆինանսական աղբյուրների ու համարժեք խթանների հստակեցումը, ինչպես նաև տնտեսության տարբեր հատվածների զարգացման ժամանակային համապատասխանեցումը համարվում են ձևափոխման արդյունավետության կարևոր չափանիշ:

Այդ համատեքստում հարկ է համաձայնել մասնագիտական գրականության մեջ արտահայտված այն տեսակետին, համաձայն որի՝ անցումը շուկայական կողմնորոշիչ կարգավորմանը պայմանավորված է բնական մենաշնորհների մեթոդների կարգավորման առկա երեք ուղղությունների կատարելագործմամբ:

Առաջին ուղղությունը, որը կարելի է անվանել անցման շրջանի կարգավորում, անմիջականորեն վերաբերում է բնական մենաշնորհների սկզբունքների ու գործիքների ստեղծման ձևափոխմանը, որի նպատակը բնական մենաշնորհների գործունեության նոր կառուցակարգերի կարգավորումն է:

Երկրորդ ուղղությունը բնական մենաշնորհի հատվածի կարգավորումն է. որի հիմնական նպատակը բնական մենաշնորհի ճյուղի ազատ ու առանց խտրականության մուտքի ապահովումն է:

Կարգավորման երրորդ ուղղությունը նախատեսում է ինստիտուցիոնալ հիմքի ստեղծման հիման վրա նոր մրցակցային միավորի ձևավորում: Դրա հիմնական նպատակը հնարավոր մենաշնորհագման արգելափակումն է կամ էլ հակամրցակցային համաձայնությունների խափանումը²⁵¹:

Բնական մենաշնորհի կարգավորման հիմնական մեթոդը գնային քաղաքականությունն է: Տնտեսվարող սուբյեկտների գնային կարգավորումը կարող է իրականացվել տարբեր մակարդակներում՝ գլոբալ, ստորաբաժանումային, ճյուղային, տարածաշրջանային ու տեղային:

Գլոբալ մակարդակը բնական մենաշնորհների գների ընդհանուր փոփոխությունն է: Գնային կարգավորման այդ մակարդակը շաղկապվում է պետության հարկաբյուջետային ու դրամավարկային քաղաքականության հետ, ինչը (մյուս մեթոդների հետ միասին) հնարավորություն է տալիս ապահովելու բյուջետային եկամուտների մուտքը, կարգավորելու սղածի տեմպերը, բնական մենաշնորհի հատվածում ձևավորելու ներդրումային քաղաքականություն:

Տնտեսության ստորաբաժանումային մակարդակը ներկայացնում է բնական մենաշնորհների գների համեմատական փոփոխությունը տնտեսության երկու խոշոր ստորաբաժանումների՝ ֆոնդագոյացնող ու սպառողական ապրանքների շուկաների,

²⁵⁰ **Богачкова Л., Налбандян М.**, Государственное регулирование цен в современной российской электроэнергетике: Монография-Волгоград: Изд-во ВолГУ, 2006, с. 44-45.

²⁵¹ **Патрушев Д., Карелин В., Прянков Б.**, Развитие конкуретных отношений в отрасли естественной монополий. М.: Экономика, 2006, с. 122.

ինչպես նաև բնական մենաշնորհի հատվածների կտրվածքով: Այդ մակարդակը հնարավորություն է տալիս լուծելու տնտեսության նշված հատվածների ռացիոնալ զարգացումները, աշխատանքային ու ներդրումային ռեսուրսների հոսքերը նշված ստորաբաժանումների միջև, կուտակման ու սպառման նորմաների կառավարման խնդիրները: Միջին հաշվով տնտեսության բնական մենաշնորհների ստորաբաժանումային մակարդակով գնային քաղաքականությունն ուղղված է տնտեսության օպտիմալ, հավասարակշռված աճի խնդրի լուծմանը:

Եյուղային ու տարածաշրջանային մակարդակները կոչված են ձևավորելու բարենպաստ գնային քաղաքականություն առանձին ճյուղերի կամ մի խումբ ձեռնարկությունների համար, ինչպես նաև ապահովելու առանձին տարածաշրջանների զարգացման աջակցությունը: Դրանք հիմնականում օգտագործվում են առանձին ճյուղային զարգացման ու սոցիալական խմբերի պետական ծրագրերի իրականացման նպատակով: Կարող է օգտագործվել նաև տնտեսության տեխնոլոգիական վերազինման կամ էլ փոքր ձեռներեցության աջակցման համար, ինչպես նաև հակաճգնաժամային ծրագրերում:

Տեղայինը նախատեսված է առանձին ձեռնարկությունների աջակցման համար: Այն կարող է օգտագործվել ձեռնարկությունների համար հակաճգնաժամային ծրագրերի իրականացման ընթացքում, որոնք ունեն ռազմավարական նշանակություն:

Տնտեսության կարգավորման նշված մակարդակներում բնական մենաշնորհի գնային քաղաքականությունը նախատեսում է շրջանառել ապրանքների ու ծառայությունների տարբերակված գներ: Կարգավորման մակրոտնտեսական մեթոդների հետ միասին դիտարկվող գնային քաղաքականությունը հնարավորություն է ստեղծում ռեսուրսների հոսքերի կառավարման միջոցով նպաստելու երկրի տնտեսության զարգացմանը²⁵²:

Բնական մենաշնորհի կարգավորման կարևոր գործիք է նաև ներդրումային քաղաքականությունը: Բնական մենաշնորհները, գտնվելով պետական վերահսկողության ներքո, ֆոնդաստեղծող հատվածից պատվիրում կամ գնում են (օրինակ՝ տնտեսության տեխնոլոգիական վերազինման ծրագրով) անհրաժեշտ տեխնիկա, դրանով իսկ աջակցում տնտեսության կոնկրետ ոլորտին կամ կոնկրետ ձեռնարկություններին: Այդ գործիքի կիրառման հնարավորությունները բավականին մեծ են, քանի որ չունեն մաշտաբային, գնային ու ժամանակային սահմանափակումներ, որոնք բնորոշ են վերը նշված մեթոդներին²⁵³:

Բնական մենաշնորհի էական գործիքներից է սոցիալական քաղաքականությունը: Օգտագործելով բնական մենաշնորհի ենթաճյուղերում կիրառվող աշխատավարձը, սոցիալական վճարումների, աշխատանքի պայմանների փորձը՝ կարելի է դրանց միջոցով կառավարել աշխատանքային ռեսուրսների հոսքերը, բնակչության զբաղվածությունը, թուլացնել սոցիալական լարվածությունը երկրում: Քանի որ բնական մենաշնորհները, գտնվելով ենթակառուցվածքային ոլորտի համակարգում, տեղաբաշխված են ամբողջ հանրապետությունում, ապա բնական մենաշնորհների սոցիալական քաղաքականությունը կարող է ուղղվել աշխատանքային ռեսուրսների հոսքերի կարգավորմանը երկրի ոչ միայն տնտեսության ստորաբաժանումային, այլև տարածաշրջանային (մարզերի, համայնքների) մակարդակների միջև:

Քննարկված մեթոդները տնտեսության կարգավորման արդյունավետ գործիքներն են, քանի որ հենվում են տնտեսական համակարգում առանցքային տեղ

²⁵² **Войтков В.**, Новые подходы к тарифообразованию // Тарифное регулирование и экспертиза. - М., 2006. -N 2, с. 41-42.

²⁵³ **Щербина М.**, Осенности государственного регулирования естественных монополий в России // Бизнес Академия - М., 2009, N 10 (20), с. 17.

գրադեցնող բնական մենաշնորհների վրա: Գնային քաղաքականությունն արդյունավետ կերպով ներգործում է տնտեսության մրցակցային հաստվածի վրա, քանի որ վերջիններս գնում են բնական մենաշնորհների արտադրանքը կամ ծառայությունը, ինչն էլ անխուսափելի է՝ կապված դրանց տեխնոլոգիական անփոխարինելիության ու բնական մենաշնորհի մենատիրության հետ: Բնական մենաշնորհների գնային, ներդրումային ու սոցիալական քաղաքականության ներգործությունը, շնորհիվ «մուլտիպլիկատորի էֆեկտի», ուժեղանում է և տարածվում ամբողջ տնտեսական համակարգում:

Պետական կարգավորման կարևորագույն պահանջ է հանրային նշանակության նպատակների ու կարգավորման ենթակա ճյուղի սուբյեկտների միջև շահերի հավասարակշռության պահպանումը: Օրինակ, էլեկտրաէներգետիկայի համակարգում այդպիսիք են՝ համակարգային օպերատորը, դիսպետչերական կառավարումը, իրացման, ցանցային ու գեներացնող ընկերությունները:

Բնական մենաշնորհի պետական կարգավորման գործիքները մասնավորապես էլեկտրաէներգետիկայի ճյուղում հանդիսանում են²⁵⁴

ա) հարկային քաղաքականությունը՝ մրցակցության ձևավորում փոքր ու միջին ձեռնարկությունների աջակցմամբ՝ հարկային ու վարկային արտոնությունների տրամադրման միջոցով,

բ) հակամենաշնորհային քաղաքականություն. մենաշնորհային ճյուղերի ապամենաշնորհացում, մենաշնորհների վարքագծի կարգավորում, այդ թվում՝ չարդարացված մրցակցային առավելությունների դեմ պայքար,

գ) ճյուղի մակարդակով աշխատանքային կանոնների կարգավորում,

դ) սակագնային կարգավորում:

Յուրաքանչյուր երկիր յուրովի է լուծում այդ խնդիրները: Համաձայն «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի՝ Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են ոլորտը կարգավորող հետևյալ հիմնական սկզբունքները²⁵⁵.

ա) կարգավորման իրականացումն ինքնավար պետական մարմնի կողմից՝ օրենքներով սահմանված իրավասությունների շրջանակում,

բ) կարգավորող մարմնի որոշումների ընդունման կոլեգիալությունը և անկախությունը,

գ) կարգավորման թափանցիկության ապահովումը հանրության համար,

դ) սպառողների և կարգավորվող որևէ անձի նկատմամբ խտրականության բացառումը,

ե) սպառողների ու կարգավորվող անձանց շահերի հավասարակշռումը՝ սպառողներին որակյալ ծառայությունների մատուցում երաշխավորելու համար անհրաժեշտ իրավատնտեսական նախադրյալների ձևավորման ու ծառայությունների հիմնավորված սակագների սահմանման միջոցով՝ միաժամանակ ապահովելով ներդրողների՝ ռիսկերին համարժեք, ողջամիտ հասույթ ստանալու հնարավորությունը,

զ) մրցակցային շուկաների զարգացմանը համընթաց՝ կարգավորման շրջանակների սահմանափակումը, ինչպես նաև հանրային ծառայությունների ոլորտում ոչ մրցակցային շուկաների առաջացման դեպքում կարգավորման ներդրումը,

է) հանրային ծառայությունների ոլորտում շուկաներ մուտքի խոչընդոտների կրճատումը և կարգավորվող անձանց կողմից մատուցվող ծառայությունների (վաճառվող ապրանքների) հասանելիության կանոնների պահպանման ապահովումը,

²⁵⁴ Трачук А., "Новая вертикальная интеграция" в реформированной электроэнергетике // Энергетик. - М., 2010, N 8, с. 6-9.

²⁵⁵ Տե՛ս «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքը, ՀՀ ՊՏ 2004.02.04/7(306) Հոդ. 120, 5-րդ հոդվածը, <http://www.arlis.am>:

ը) հասցեական կարգավորումը,

թ) հանձնաժողովի կողմից սահմանվող սակագների համապատասխանությունը մատուցվող ծառայությունների (վաճառվող ապրանքների) սպասարկման որակին:

Միաժամանակ, ըստ ոլորտների, համապատասխան օրենքներով սահմանվել են սակագնային կարգավորման սկզբունքներ.

1. «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենք (21-րդ հոդվածով սահմանված են էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի սակագների ձևավորման սկզբունքները)²⁵⁶,

2. ՀՀ ջրային օրենսգիրք (79-րդ հոդվածով նախատեսված են ջրային ռեսուրսների ու ջրային համակարգի օգտագործման սակագների ձևավորման սկզբունքները)²⁵⁷,

3. «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենք (29-րդ հոդվածով սահմանված են սակագների դրույթաչափերի առանձնահատկությունները, իսկ 31-րդ հոդվածով՝ սակագնային կարգավորման ենթակա ծառայություններ մատուցողներին ներկայացվող լրացուցիչ պահանջները)²⁵⁸,

4. «Փոստային կապի մասին» ՀՀ օրենք (18¹ հոդվածում կարգավորված են փոստային կապի ունիվերսալ ծառայությունների մատուցման սակագները և դրանց ձևավորման սկզբունքները)²⁵⁹ և այլն:

Այսպիսով, վերլուծելով բնական մենաշնորհների գործունեության կառուցակարգերի փոփոխությունները՝ հանգում ենք եզրակացության, որ վերափոխման ընթացքում այն բերում է ապահովագրման գործընթացների: Հետևաբար, բնական մենաշնորհների ձևափոխման գործունեության կարգավորման կառուցակարգերը նոր շուկա նախագծելիս պետք է մշակվեն՝ հաշվի առնելով նաև նրա գործունեության կառուցակարգերի հետագա փոփոխությունները:

Պետության ու շուկայի մասնակիցների հիմնական ուշադրությունը պետք է կենտրոնացված լինի նոր շուկայի մանրամասն նախագծմանը, որը կընդգրկի մրցակցային ու մենաշնորհի շուկայական հատվածների ստեղծման կանոնները, նոր ծառայությունների շուկաների ձևավորման ու զարգացման կառավարման նոր համակարգի ստեղծումը: Միջոցառումների համակարգը պետք է լինի համալիր, ընդգրկի բնական մենաշնորհի, դրա պետական կարգավորման ու սպառողների մակարդակները:

Բնական մենաշնորհների գործունեության կառուցակարգերի արդիականացման վճռորոշ պայման պետք է լինի սպառողների շահերի առաջնության ապահովումը և շուկայի վերափոխումների ընթացքում նոր գնորդների ներգրավումը: Սպառողների շահերի գնահատման հաշվառման համար առաջարկվում է կիրառել որակական ցուցանիշների փոփոխված գնահատականներ:

Ենթակառուցվածքային բնական մենաշնորհների ձևավորումը հիմնված է ապամենաշնորհացման, վերակառուցավորման ու ապակարգավորման սկզբունքների վրա: Ապակարգավորումը դիտարկվում է որպես անցման գործընթաց ուղղակի գնային կարգավորումից շուկայական կողմնորոշիչ կարգավորմանը և, որպես կառուցակարգ, մրցակցության ձևավորմանն ու զարգացման անհրաժեշտությանը: Շուկայական կողմնորոշիչ կարգավորումը նշանակում է, որ կարգավորողի հիմնական ուշադրության

²⁵⁶ Տե՛ս «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքը, ՀՀ ՊՏ 2001.03.22/10(142) Հոդ.205, 21-րդ հոդվածը, <http://www.arlis.am>:

²⁵⁷ Տե՛ս ՀՀ ջրային օրենսգիրքը, ՀՀ ՊՏ 2002.07.10/24(199) Հոդ.581, 79-րդ հոդվածը, <http://www.arlis.am>:

²⁵⁸ Տե՛ս «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքը, ՀՀ ՊՏ 2005.08.24/54(426) Հոդ. 1034, 29-րդ և 31-րդ հոդվածները, <http://www.arlis.am>:

²⁵⁹ Տե՛ս «Փոստային կապի մասին» ՀՀ օրենքը, ՀՀ ՊՏ 2005.01.26/7(379) Հոդ.120, 18¹ հոդվածը, <http://www.arlis.am>:

կենտրոնը պետք է դառնա հենց շուկայական միջավայրը և շուկայի ենթակառուցվածքը, այլ ոչ թե կոնկրետ ձեռնարկությունների վարքագիծը:

Բնական մենաշնորհների ձևափոխման հիմնական մոդել պետք է հանդիսանա վերակառուցավորումը՝ ուղղահայաց-ինտեգրված ընկերությունների տրոհումն՝ ըստ բիզնեսի տեսակների: Սակայն շուկայական ուժերի ազդեցության ներքո, ինչքան էլ որ մանրագնին լինի իրականացված վերակառուցավորումը, կարող է տեղի ունենալ առանձին կառույցների ապահիտեգրում: Արդյունքում ձևավորվում է մի իրավիճակ, երբ կարգավորումն ավելի շատ պաշտպանում է ճյուղին, քան վերջնական սպառողներին, ինչը բնորոշ է վաճառողի շուկային:

Ելնելով անկատար մրցակցային պայմաններում բնական մենաշնորհների առանձնահատկություններից՝ անհրաժեշտ է ներգրավել վերահսկողության լրացուցիչ կառույցներ, որոնք գոյություն չեն ունեցել մենաշնորհի պայմաններում, կամ էլ ազդեցություն չեն գործել բնական մենաշնորհի գործունեության վրա մինչև ձևափոխում իրականացնելը:

Բացի այդ, բնական մենաշնորհների արդյունավետ զարգացման ռազմավարության մշակումը պահանջում է կատարել ինստիտուցիոնալ բնույթի վերափոխումներ՝ հաշվի առնելով սոցիալ-տնտեսական հնարավոր փոփոխությունների հետևանքները: Ընդ որում, բնական մենաշնորհների գործառնության կառուցվածքի ձևավորումը ենթադրում է այն դիտարկել որպես միասնական համալիր՝ պահպանելով ենթակառուցվածքի մենաշնորհային ամբողջությունը:

Ինստիտուցիոնալ վերափոխումները պետք է իրականացվեն՝ հաշվի առնելով երկրի զարգացման տնտեսական շահերը, նպաստելով սահուն կերպով անցնելու հին տնտեսական համակարգից նոր տնտեսական հարաբերություններին: Մեր կարծիքով, ՀՀ-ում բազմաթիվ սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներ ունեն իրենց ինստիտուցիոնալ պատճառները և կապված են ինստիտուտների ոչ արդյունավետ գործունեության հետ (ստվերային տնտեսության մեծ տեսակարար կշիռ, բարձր գործառնական ծախսեր, ֆինանսական ու հատկապես բանկային համակարգի հանդեպ անվստահություն, երկրի միջազգային ռեյտինգի (վարկանիշի) անկում, բնակչության աղետալի միգրացիան, կոռուպցիան, կառավարության կողմից ՓՄՁ-ի սատարման գրեթե բացակայումը և այլն):

Ամփոփելով վերլուծությունն ու հետազոտական հիմնավորմամբ արված առաջարկությունները՝ կարելի է ներկայացնել նաև կիրառական արժեքայնություն պարունակող հետևյալ եզրահանգումները.

1. Բնական մենաշնորհի կառավարման գործընթացում պետք է միաժամանակ օգտագործվեն ՀՀ տնտեսության կառավարման գործող մեթոդները, որոնք էլ իրենց հերթին կընձեռնեն կարգավորման նոր հնարավորություններ: Բնական մենաշնորհի կառավարման հետ կարգավորման մակրոտնտեսական ու ռեսուրսային մեթոդների համատեղ կիրառումը հնարավորություն կտա ունենալու ներդրումային ու աշխատանքային հոսքերի արդյունավետ կառավարում, դրանք կենտրոնացնելու տնտեսական զարգացման գերակա ճյուղերում և, ընդհանուր առմամբ, տնտեսության պետական կարգավորումը հասցնելու որակական նոր մակարդակի:

2. Բնական մենաշնորհի կառավարման բազայի վրա տնտեսության պետական կարգավորումը պետք է իրականացվի հետևյալ սկզբունքների կիրառման միջոցով՝ համակարգվածություն, ռեսուրսների հոսքերի կառավարում, բավարար հիմնավորվածություն, մրցակցային հատվածի կարգավորման անուղղակիություն, լրիվություն, անհակասականություն, գործող մեթոդների հետ համադրելիություն, ինչպես նաև անընդհատություն ու ճկունություն:

3. Բնական մենաշնորհի հատվածի կարգավորման նպատակով անհրաժեշտ է կիրառել գների առաստաղի սահմանման մեթոդ: Տվյալ համակարգը պետք է

տեղեկացնի կարգավորողին կարգավորման ենթակա ճյուղի վիճակի վատացման կամ լավացման մասին, ինչպես նաև հնարավորություն տա գնահատելու գների «շեմքային» մակարդակը, որպեսզի կարգավորողն ի վիճակի լինի համապատասխան ձևով արձագանքելու, խստացնելու պայմանները, եթե ճյուղում իրավիճակը զգալիորեն բարելավվել է (դարձել է ավելի լավ, քան ՀՀ ամբողջ տնտեսությունում է), կամ էլ թուլացնելու ճնշումը բացասական գործոնների առաջացման պարագայում:

4. Ներկայումս Հայաստանի էլեկտրաէներգիայի ոլորտի գործունեության կարգավորման գործող կառուցակարգերը սահմանափակում են պետության միջամտության շրջանակները: Կառավարության հիմնական խնդիրը օրենսդրական դաշտի ապահովումն է, գործառույթների ու վերահսկողության իրականացումը, նորմատիվ-իրավական առաջադրանքների իրականացումը:

ՀՀ-ի համար այդ հարցում ուղենշային կարող է լինել Սկանդինավյան երկրների փորձը, որտեղ էլեկտրաէներգիայի ոլորտի բարեփոխումներն իրականացվեցին նորմատիվ-իրավական հենքով: Այդ երկրների խորհրդարաններն ընդունեցին օրենսդրական ակտեր՝ ուղղված էլեկտրաէներգետիկայի իրավական հիմքերի վերափոխմանը, մշակվեցին միասնական շուկայական տնտեսավարման նոր հայեցակարգեր, սահմանվեցին ոլորտի սուբյեկտների պատասխանատվության ընդհանրական շրջանակներն ու աստիճանը: Սակայն Սկանդինավյան ամեն մի երկիր, ելնելով իրեն բնորոշ առանձնահատկություններից, այդ շրջանակներում ընտրեց սեփական տնտեսության համար տեղայնացված մոտեցում:

THE WAYS TO IMPROVE THE METHODS AND MECHANISMS OF STATE REGULATION OF NATURAL MONOPOLIES

MIKAYEL SOGHOMONYAN

*Deputy chairman of public services regulatory commission of the Republic of Armenia,
PhD Student of the Armenian National Agrarian University,
Yerevan, Republic of Armenia*

The main purpose of the article is to analyze the mechanisms of state regulation and assess the balancing of the interests of the subjects of natural monopolies in the sphere of production and consumption of services in the RA. With this goal, the task is to study the degree of state participation in the regulation of natural monopolies, as well as to identify the main methods of state regulation of natural monopolies that will be acceptable in the management of natural monopolies in Armenia.

The mechanisms of the effectiveness of the methods used in the regulatory process are presented, with particular attention to pricing, investment and social settlement policies. The author especially emphasizes the basic principles governing this area, which guide the relevant bodies of the RA. In a market economy, the Republic of Armenia sets goals not only in ensuring the activities of natural monopolies, but also in strengthening and expanding their regulatory functions in the national economy.

The joint use of macroeconomic and resource management methods will provide an additional opportunity for the effective management of investment flows, to concentrate them in priority sectors of the economy, as well as to bring the state regulation of these processes to a qualitatively new level.

Key words: *natural monopoly, state regulation, management, method, mechanism, price policy, infrastructure.*

ПУТИ СОВЕРШЕНСТВОВАНИЯ МЕТОДОВ И МЕХАНИЗМОВ ГОСУДАРСТВЕННОГО РЕГУЛИРОВАНИЯ ЕСТЕСТВЕННЫХ МОНОПОЛИЙ

МИКАЭЛ СОГОМОНЯН

*Заместитель председателя Комиссии по регулированию
общественных услуг Республики Армения,
соискатель Национального аграрного университета Армении,
г.Ереван, Республика Армения*

Основной целью статьи является анализ механизмов государственного регулирования и оценка балансирования интересов субъектов естественных монополий в сфере производства и потребления услуг в РА. С данной целью поставлена задача изучить степень участия государства в регулировании естественных монополий, а также выделить основные методы государственного регулирования естественных монополий, которые будут приемлемы в сфере управления естественными монополиями Армении.

Представлены механизмы эффективности методов, используемых в процессе регулирования. При этом особое внимание уделяется ценовой, инвестиционной и социальной политике урегулирования. Автор особенно подчеркивает регулирующие данную сферу основные принципы, которыми руководствуются соответствующие органы РА. В условиях рыночной экономики в РА ставятся задачи не только в вопросе обеспечения деятельности естественных монополий, но и в деле укрепления и расширения их регулирующих функций в системе национальной экономики.

Совместное использование методов макроэкономики и управления ресурсами предоставит дополнительную возможность для эффективного управления инвестиционными потоками, сосредоточения их в приоритетных секторах экономики, а также позволит вывести государственное регулирование этих процессов на качественно новый уровень.

Ключевые слова: *естественная монополия, государственное регулирование, управление, метод, механизм, ценовая политика, инфраструктура.*